Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-33.3-Մ3-5 Ավագ մասնագետ(2024-03-22)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Աղետների և արտակարգ այլ իրավիճակների կառավարման վարչություն | Աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման կառավարման բաժին | Ավագ մասնագետ, (27-33.3-Մ3-5)

1.2 Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետը կամ Բաժնի մյուս ավագ մասնագետը:

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան փ. 130:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. մասնակցում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ոլորտում Նախարարության քաղաքականության իրականացման համակարգմանը.
2. մասնակցում է Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, Գրասենյակի, Նախարարությանը ենթակա պետական մարմինների և Նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ մասնագիտական ստորաբաժանումներ) հետ համատեղ աղետների ռիսկի և արտակարգ այլ իրավիճակների կառավարմանն ուղղված ռազմավարական բնույթի փաստաթղթերի, նպատակային ծրագրերի իրականացմանը.
3. իրականացնում է աղետների ռիսկի նվազեցմանն և արձագանքմանն առնչվող տեղեկատվության հավաքագրման, ամփոփման աշխատանքներ, մասնակցում վերլուծման, անհրաժեշտության դեպքում՝ ոլորտային ուսումնասիրությունների կատարման աշխատանքներին.
4. իրականացնում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ոլորտի զարգացման հիմնախնդիրներով առաջարկությունների ներկայացման աշխատանքներ.
5. իրականացնում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ոլորտին առնչվող միջազգային ծրագրերով նախատեսված միջոցառումների մշակման աշխատանքներ.

6. իրականացնում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման գործընթացների իրականացմանն ուղղված կարգերի, պլանների, ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակման աշխատանքներ.
7. մասնակցում է աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ոլորտի միջազգային ծրագրերով նախատեսված աշխատանքներին, համատեղ իրականացվող ծրագրերին, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, քննարկումներին, սեմինարներին և այլ միջոցառումներին:

Իրավունքները.

- ստանալ տեղեկատվություն աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ոլորտի զարգացման հիմնախնդիրներով քննարկումներին, հանդիպումներին, խորհրդակցություններին, մասնակցության նպատակով.
- հարցում կատարել և ստանալ մասնագիտական ստորաբաժանումներից լրացուցիչ տեղեկատվություն աղետների ռիսկի կառավարմանն ուղղված ռազմավարական բնույթի նպատակային ծրագրերի, արտակարգ իրավիճակների ոլորտի միջազգային ծրագրերի իրականացման, ինչպես նաև արտակարգ իրավիճակների ոլորտի զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ.
- ծանոթանալ մասնագիտական ստորաբաժանումներից աղետների ռիսկի կառավարման բնագավառի օրենսդրության կատարելագործմանն ուղղված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ստացված տեղեկատվությանը, ներկայացնել առաջարկություններ Բաժնի պետին.
- ստանալ և ուսումնասիրել մասնագիտական ստորաբաժանումներից աղետների ռիսկի կառավարման գործընթացների իրականացմանն ուղղված ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի մշակման համար տեղեկատվություն, պահանջել լրացուցիչ տեղեկություններ.
- մասնակցել աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման ոլորտի զարգացման հիմնախնդիրներով քննարկումներին, հանդիպումներին, խորհրդակցություններին, ներկայացնել մասնագիտական առաջարկություններ:

Պարտականությունները.

- նախապատրաստել աղետների ռիսկի նվազեցման և արձագանքման գործընթացների իրականացմանն ուղղված կարգերի, պլանների, ուղեցույցների, մեթոդական ձեռնարկների և այլ փաստաթղթերի նախագծերի մշակման նյութերը.
- հավաքագրել և ուսումնասիրել մասնագիտական ստորաբաժանումներից աղետների ռիսկի կառավարմանն առնչվող ստացված առաջարկությունները.
- ուսումնասիրել աղետների ռիսկի կառավարման բնագավառի զարգացման ռազմավարական բնույթի յուրաքանչյուր փաստաթղթերով նախատեսված միջոցառումների, ինչպես նաև առանձին հանձնարարականների կատարման ընթացքը, կազմել արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ և ներկայացնել Բաժնի պետին.
- մշակել արտակարգ իրավիճակների ոլորտի զարգացման հիմնախնդիրներով մասնագիտական ստորաբաժանումներից ստացված առաջարկությունները.
- ուսումնասիրել արտակարգ իրավիճակների ոլորտին առնչվող միջազգային ծրագրերով նախատեսված միջոցառումների վերաբերյալ մասնագիտական ստորաբաժանումներից ստացված առաջարկությունները, արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել Բաժնի պետին.
- ուսումնասիրել արտակարգ իրավիճակների ոլորտի միջազգային ծրագրերով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը, կազմել և ներկայացնել հաշվետվությունների նախագծեր.
- համագործակցել մասնագիտական ստորաբաժանումների հետ աղետների ռիսկի կառավարմանն ուղղված ռազմավարական բնույթի նպատակային ծրագրերի համատեղ մշակման նպատակով:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Փոփոխությունների կառավարում
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: